«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2025թ. գործունեության վերաբերյալ Վարչության

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, Խորհրդի անդամներ, տիկնայք և պարոնայք,

Ողջունում եմ ձեզ «Յունիբանկի» բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին՝ 2025 թվականի արդյունքներն ամփոփելու նպատակով: Թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել անցած տարվա ընթացքում արձանագրված արդյունքների և հետագա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ Վարչության ամփոփ հաշվետվությունը:

Մակրոտնտեսական մարտահրավերների պայմաններում Յունիբանկը ժամանակին ադապտացվեց շուկայական միջավայրի փոփոխություններին և շարունակեց ամրապնդել իր դիրքերը Հայաստանի բանկային շուկայում: Բանկի գործունեության դրական դինամիկան ձևավորվել է երկրում պահպանվող տնտեսական ակտիվության համատեքստում, որը գերազանցել է սպասելիքները և նպաստել բանկային պրոդուկտների ու ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկի պահպանմանը:

Բանկի գործունեությունը կենտրոնացած էր կորպորատիվ կառավարման և ներքին հսկողության համակարգերի հետագա զարգացման, գործառնական արդյունավետության բարձրացման և սոցիալական պատասխանատվության մակարդակի ամրապնդման վրա: Բանկի տեխնոլոգիական փոխակերպման երկարաժամկետ ռազմավարության իրականացմանը զուգահեռ ձեռնարկվել են միջոցառումներ՝ ուղղված ռիսկերի կառավարման համակարգի և հսկողական մեխանիզմների ամրապնդմանը, ինչպես նաև նորմատիվահեն մոտեցումների ներդրմանը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարկային պորտֆելի որակի պահպանմանը և հիմնական ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովմանը: Ժամկետանց վարկերի կառավարման համալիր մոտեցումը, վարկառուների հետ ակտիվ փոխգործակցությունը և երկուստեք ընդունելի լուծումների որոնումը ապահովել են շուրջ 12.3 մլրդ դրամի փաստացի հետբերում, ներառյալ ընդհանուր 3.5 մլրդ դրամի չափով գույքի իրացումը:

<u>Հիմնական իրադարձությունները</u>

- ✓ Շարունակելով կապիտալի շուկայում ակտիվ զարգացումը և հետևողականորեն իրականացնելով ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարությունը՝ Յունիբանկը հանդես եկավ որպես անժամկետ և ստորադաս պարտատոմսերի առաջին թողարկող, ինչպես նաև իրականացրեց սովորական և արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում:
  Սովորական բաժնետոմսերի և Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկին միացել են ավելի քան 160 նոր բաժնետերեր: Կանոնադրական կապիտալը համալրվել է ավելի քան 2.5 մլրդ դրամով, մնացած 2.9 մլրդ դրամը ձևավորվել է որպես էմիսիոն եկամուտ: Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի սովորական բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը կազմել է գրեթե 11%, իսկ Գ դասի արտոնյալ բաժնետոմսերինը՝ 85%: Նշված բաժնետոմսերի ավելի քան 90%-ը ձեռք են բերել մանր ներդրողները, ինչը մեկ անգամ ևս վկայում է Բանկի նկատմամբ ներդրողների բարձր վստահության և անհատ ներդրողների կողմից մեծ հետաքրքրվածության մասին:

- ✓ 2025 թվականին Բանկը նշանակալի քայլ կատարեց կորպորատիվ կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ՝ միանալով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Այս նախաձեռնությունը նպաստեց գործընթացների թափանցիկության հետագա ամրապնդմանը, կառավարման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև Բանկի գործելակերպի համապատասխանեցմանը կորպորատիվ կառավարման լավագույն չափանիշներին: Իրականացվել են անկախ խորհրդատուների՝ միջազգային KPMG և Civitta ընկերությունների առաջարկությունները, որոնք միտված էին ներքին գործընթացների կազմակերպման և հաճախորդների հետ փոխգործակցության ոլորտներում միջազգային լավագույն փորձի ներդրմանը,

ներառյալ սպասարկման մշակույթի զարգացումը և հաճախորդների սպասարկման չափանիշների բարձրացումը:

- ✓ Տեխնոլոգիական ենթակառուցվածքի կատարելագործման ռազմավարության շրջանակներում նախաձեռնվել են տվյալների բազայի վերլուծական գործիքակազմի ներդրման լայնածավալ աշխատանքներ, բարձր տեխնոլոգիական լուծումների մշակում փոքր և միջին բիզնեսի վարկավորման գործընթացը պարզեցնելու նպատակով, ինչպես նաև ներդրվել են գործառնական լուծումներ՝ ուղղված իրավական սպասարկման գործընթացների օպտիմալացմանը:
  Աջակցելով Հայաստանում ֆինտեխ ոլորտի զարգացմանը՝ Յունիբանկը դարձել է FinTech Armenia ասոցիացիայի հիմնադիր անդամ՝ իր ներդրումն ունենալով ֆինտեխ էկոհամակարգի դինամիկ զարգացման գործում ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ միջազգային մակարդակում: Ավանդաբար, Բանկն աջակցել է Երևանում միջազգային ֆինտեխ համաժողովի անցկացմանը: 2025 թվականին Յունիբանկն առաջին անգամ մասնակցեց տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական միջոցառմանը՝ DigiTec 2025-ին՝ ներկայացնելով մի շարք նոր թվային լուծումներ և ներդրումային ծառայություններ:

- ✓ Յունիբանկի գործունեության անփոփոխ առաջնահերթությունը շարունակել է մնալ հաճախորդների նկատմամբ հոգատարությունը և բարձրորակ սպասարկման ապահովումը: Աշխարհաքաղաքական ռիսկերի պայմաններում գործառնական գործունեության կայունությունն ապահովելու նպատակով Բանկը հետևողականորեն իրականացրել է մասնաճյուղային ցանցի ընդլայնման և թղթակցային ցանցերի աշխարհագրական դիվերսիֆիկացման ռազմավարությունը՝ գործարար հարաբերություններ հաստատելով Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մի շարք առաջատար բանկերի հետ: Յունիբանկը դարձել է Առևտրի և ֆինանսավորման բանկային ասոցիացիայի (BAFT) անդամ՝ միանալով միջազգային գործընկերության զարգացման կարևոր հարթակին: Դառնալով Սինգապուրում կայացած համաժողովի հովանավոր՝ Բանկը վերահաստատել է իր հանձնառությունը հուսալի ֆինանսական գործելակերպի զարգացմանն ու նորարարությունների խթանմանը:
  Բանկը շարունակել է մասնաճյուղային ցանցի արդիականացումն ու հաճախորդների սպասարկման որակի բարելավումը՝ դրանք համադրելով թվային սպասարկման եղանակների զարգացման հետ: Գործարկվել է հերթի առցանց ամրագրման համակարգը, իսկ Բանկի Թեժ հեռախոսակապի կենտրոնի գործառույթների ընդլայնման շնորհիվ զգալիորեն բարձրացել է հաճախորդների հետ փոխգործակցության արդյունավետությունը, կրճատվել է դիմումների մշակման ժամանակը՝ ապահովելով բանկային ծառայությունների էլ ավելի լայն հասանելիություն: Իրականացվել են մի շարք մասնաճյուղերի համալիր բարեկարգման աշխատանքներ, ինչը թույլ է տվել ստեղծել ավելի ժամանակակից, հարմարավետ և տեխնոլոգիապես զարգացած սպասարկման միջավայր՝ ուղղված մատուցվող ծառայությունների որակից հաճախորդների գոհունակության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև մեկնարկել են Բանկի գլխամասային գրասենյակի ստորաբաժանումները ժամանակակից վարչական համալիրում կոնսոլիդացնելու աշխատանքները:
  Յունիբանկը հաստատել է հաճախորդների պաշտպանության ոլորտում միջազգային պահանջներին համապատասխանությունը. հաջողությամբ անցել է տեղեկատվական անվտանգության չափանիշներին համապատասխանության վերահավաստագրման աուդիտը, ինչպես նաև ստացել է Հաճախորդների պաշտպանության հավաստագիր, որը շնորհվում է MFR միջազգային վարկանիշային գործակալության կողմից:

- ✓ Բանկը շարունակել է հետևողականորեն ամրապնդել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը՝ ապահովելով ներքին հսկողության մեխանիզմների արդյունավետ գործունեությունը և կարգավորողի պահանջների պահպանումը: Էականորեն աճել է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ծավալը, ինչին զուգահեռ Բանկը պահպանել է գործարքների մշտադիտարկման, ռիսկերի ժամանակին բացահայտման և ներքին ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողության ապահովման բարձր մակարդակը: Ռիսկերի վրա հիմնված մոտեցման շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ոչ ռեզիդենտ հաճախորդների խորացված ուսումնասիրությանը, ինչպես նաև իրականացվող գործարքների՝ Բանկի կողմից սահմանված ռիսկի ախորժակին համապատասխանության գնահատմանը: Գործող համակարգի արդյունավետության լրացուցիչ հաստատում է հանդիսացել KPMG ընկերության կողմից իրականացրած աուդիտորական ստուգման արդյունքում տրամադրված դրական եզրակացությունը, որը հաստատել է Բանկի գործընթացների համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին:

- ✓ Հետևելով իր «Բանկ և ավելին» կարգախոսին և վերահաստատելով առողջ և ակտիվ կենսակերպի խթանման իր հանձնառությունը՝ Յունիբանկը շարունակել է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը. Բանկը հանդես է եկել որպես Հայաստանի ժայռամագլցման բաց առաջնության հովանավոր, նախաձեռնել և հովանավորել է «Unibank Cup»

ֆուտզալի միջազգային մրցաշարի անցկացումը, սկսել է երկարաժամկետ համագործակցություն ֆուտբոլային ակումբի հետ, հանդիսացել է հեծանվասպորտի աշխարհի առաջնության որակավորման փուլի գլխավոր հովանավորը՝ հնարավորություն ընձեռելով մեր մարզիկներին ներկայանալ համաշխարհային հարթակում, պահպանել է «Unisport» ակումբի գլխավոր հովանավորի կարգավիճակը. «Unisport»-ը այս տարի դարձավ ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի չեմպիոն: «Համահայկական ինտելեկտուալ շարժման» հետ ավանդական գործընկերության շրջանակում Յունիբանկը շարունակում է աջակցել «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի անցկացմանը:

- ✓ Էկոհամակարգի զարգացման օրակարգի շրջանակներում Յունիբանկը միացել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությանը՝ 10 միլիոն դրամի նվիրատվություն կատարելով Սյունիքի մարզի Սպանդարյանի ջրանցքի վերակառուցման համար: Agents For Impact միջազգային ընկերության աջակցությամբ նախաձեռնվել և իրականացվում է նախագիծ՝ ուղղված Բանկում ESG գործընթացների փուլային ներդրմանը և համապատասխան վարկանիշի ստացմանը:
  Միջազգային համագործակցության ամրապնդման և բրիտանական բիզնես համայնքի հետ փոխգործակցության ընդլայնման նպատակով Յունիբանկը դարձել է Հայ-բրիտանական Առևտրի պալատի անդամ:

- ✓ Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Բանկի, այդ թվում՝ երկարաժամկետ ավանդների վարկանիշները B2 մակարդակից մինչև B1, ինչպես նաև բարելավել է վարկունակության գնահատականը, ինչն արտացոլում է վարկային պորտֆելի որակի և շահութաբերության աճը:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Բանկը ցուցաբերել է կայուն ֆինանսական դինամիկա՝ ներառյալ կապիտալի աճը և գործառնական ցուցանիշների բարելավումը, և 2025թ. ամփոփել է հետևյալ հիմնական ցուցանիշներով՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS).

- **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 393.8 մլրդ դրամ՝ ցուցադրելով 56.5 մլրդ դրամի աճ:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** ավելացել են 32.5%-ով՝ հասնելով 264.6 մլրդ դրամի և կազմելով ընդհանուր ակտիվների 67%-ը: Արդյունքում **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** գերազանցել են 20.2 մլրդ դրամը:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կազմել են 343.6 մլրդ դրամ՝ ավելանալով 51.1 մլրդ դրամով: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 25.7 մլրդ դրամ՝ տարվա ընթացքում աճելով 70%-ով:
- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 50.2 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 17.9%, ինչը գերազանցում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%):
- Բանկը հաշվետու տարին ավարտել է զուտ շահույթի պատմական ռեկորդային՝ 9.8 մլրդ դրամ ցուցանիշով, կապիտալի եկամտաբերության (ROE) 20.1% մակարդակով:

<u>Մանրածախ բիզնես</u>

Մանրածախ ուղղությունը պահպանել է Բանկի բիզնես կառուցվածքում իր գերիշխող դիրքը՝ կազմելով ընդհանուր պորտֆելի 71%-ը: 2025 թվականի արդյունքներով մանրածախ վարկային պորտֆելը աճել է 36 մլրդ դրամով կամ 24%-ով՝ գերազանցելով 183 մլրդ դրամը:

Աճի հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ հիփոթեքային վարկավորումը, որի զարգացմանը նպաստել են հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակը և համագործակցությունը Հայաստանի առաջատար կառուցապատող ընկերությունների հետ: Տարվա արդյունքներով հիփոթեքային պորտֆելը աճել է գրեթե 40%-ով և կազմել շուրջ 86 մլրդ դրամ՝ միաժամանակ պահպանելով ժամկետանց պարտավորությունների նվազագույն մակարդակը՝ 0.04%:

Մանրածախ բիզնեսի զարգացման շրջանակում Բանկը շարունակել է գործիքակազմի կատարելագործումը՝ քարտային ուղղությունը սահմանելով որպես առաջնահերթություն: Տարվա ընթացքում թարմացվել են գործող գործիքներն ու ծառայությունները, իրականացվել են նոր լուծումների գործարկմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ կոբրենդային և տուրիստական քարտերի, ինչպես նաև Mastercard-ի հետ համատեղ նոր նախագծերի իրականացման աշխատանքների մասով: Բացի այդ, Բանկը միացել է ArCa հետվճարի ծրագրին, ինչը հնարավորություն է ընձեռել ընդլայնելու հաճախորդներին հասանելի

առավելությունները և բարձրացնել քարտային պրոդուկտների գրավչությունը: Արդյունքում գործող քարտերի քանակը գերազանցել է 240,000՝ ապահովելով 21% աճ:

Մանրածախ վարկավորման մյուս ուղղություններով նույնպես արձանագրվել է դինամիկ աճ:

Բանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել թվայնացման գործընթացներին՝ նպատակ ունենալով բարձրացնել բանկային ծառայությունների հասանելիությունը, ամրապնդել հաճախորդների լոյալությունը և ուժեղացնել մրցակցային դիրքերը մանրածախ շուկայում: Տարվա ընթացքում իրականացվել են քարտերի ձևակերպման շրջանակներում բիոմետրիկ նույնականացման ներդրմանը, ինչպես նաև նորարարական վարկային պրոդուկտով Wildberries գլոբալ առցանց հարթակ մուտք գործելուն ուղղված նախապատրաստական միջոցառումներ:

Գործարքային ակտիվությունը նույնպես արձանագրել է զգալի աճ. հայկական առաջին վճարահաշվարկային համակարգը՝ UBPay-ը, հաջողությամբ ինտեգրվել է դրամական փոխանցումների շուկայում՝ ընդգրկելով երկրի գրեթե բոլոր համակարգաստեղծ առևտրային բանկերը: Առաջատար միջազգային մատակարարների՝ «URemit»-ի, «iSend»-ի և «MoneyTo»-ի հետ համագործակցությունը ընդլայնել է փոխանցումների աշխարհագրությունը՝ հնարավորություն ընձեռելով հաճախորդներին առաջարկել ծառայությունների ավելի լայն շրջանակ, շահավետ փոխարժեքներ և ժամանակակից ֆինտեխ լուծումներ:

<u>Կորպորատիվ բիզնես</u>

Տնտեսության և ձեռնարկատիրության աջակցությունը շարունակել է մնալ Բանկի գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը: Միկրո, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների աջակցության ռազմավարության հետևողական իրականացման և հաճախորդների բազայի ընդլայնման արդյունքում 2025 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկային պորտֆելը աճել է 37%-ով և կազմել 77 մլրդ դրամ: Կորպորատիվ հաճախորդների թիվը գերազանցել է 12,600-ը, հաշվետու տարվա ընթացքում ներգրավվել է ավելի քան 1,500 նոր հաճախորդ:

Վարկային գործիքների և ծառայությունների կատարելագործմանը զուգահեռ Բանկն իրականացրել է տեխնիկական ենթակառուցվածքի զարգացմանը և ոչ վարկային ծառայությունների ընդլայնմանն ուղղված միջոցառումներ, ինչը նպաստել է ոչ տոկոսային եկամուտների էական աճին: Մասնավորապես, POS-տերմինալների վաճառքների ակտիվացման արդյունքում 2025 թվականին էքվայրինգ գործառնությունների միջին ամսական շրջանառությունը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ աճել է 31%-ով, իսկ իրականացված գործարքների քանակը՝ 61%-ով: Նշված արդյունքներին նպաստել է նաև մարքեթինգային և խթանող միջոցառումների համալիր իրականացումը՝ ուղղված հաճախորդների գործարար ակտիվության բարձրացմանը և Բանկի վճարային ծառայությունների կիրառման ընդլայնմանը:

Լիզինգային ուղղության զարգացումը շարունակում էր մնալ ՓՄՁ ֆինանսավորման ոլորտում Բանկի առաջնահերթություններից մեկը: Իրականացվող ռազմավարությունը նպատակաուղղված է լիզինգային պորտֆելի ծավալների աճին, պրոդուկտների դիվերսիֆիկացմանը և հաճախորդների բազայի ընդլայնմանը: Հաշվետու ժամանակահատվածում լիզինգային պորտֆելը աճել է 55%-ով՝ պահպանելով ժամկետանց պարտավորությունների զրոյական մակարդակ, ինչը վկայում է պորտֆելի բարձր որակի և ռիսկերի գնահատման ու կառավարման արդյունավետ ընթացակարգերի մասին:

Բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը Գերմանահայկական հիմնադրամի հետ ՓՄՁ սուբյեկտների աջակցության ծրագրերի շրջանակում՝ ապահովելով հաճախորդների հասանելիությունը արտոնյալ ֆինանսավորման ծրագրերին և նպաստելով տնտեսությունում ձեռնարկատիրական ակտիվության զարգացմանը:

Բանկը շարունակել է ակտիվորեն աջակցել շրջակա միջավայրի պահպանությանը և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը միտված նախագծերին:

Ֆինանսավորման մատչելի աղբյուրների ներգրավման շրջանակում գրանցվել է ցպահանջ միջոցների մնացորդների պատմական ռեկորդային ցուցանիշ. դրամային միջոցների ծավալը գերազանցել է 60 մլրդ դրամը:

<u>Կորպորատիվ կառավարում</u>

Բանկում գործում է հավասարակշռված և թափանցիկ կորպորատիվ կառավարման համակարգ՝ Բանկի կառավարման մարմինների միջև փոխգործակցության և անհատական իրավասությունների հստակ սահմանված

շրջանակով: Բանկը շարունակել է լինել բաց և թափանցիկ՝ ապահովելով տեղեկատվության ժամանակին բացահայտումը և արդյունավետ փոխգործակցությունը բաժնետերերի, հաճախորդների, կարգավորողի և այլ շահագրգիռ կողմերի հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ռիսկերի կառավարման, ներքին հսկողության և համապատասխանության հսկողության համակարգերի զարգացմանն ու արդյունավետ գործունեությանը:

Կառավարման մարմինների գործունեությանը աջակցելու համար Բանկում ակտիվ գործում են մասնագիտացված հանձնաժողովներ. **Խորհրդին կից՝** Աուդիտի հանձնաժողով, Ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով, **Վարչությանը կից՝** Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով, Տենդերային հանձնաժողով, Վարկային սքորինգի հանձնաժողով, Մարքեթինգի հանձնաժողով: Ակտիվորեն գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովն ու ենթահանձնաժողովները, Վարկային կոմիտեն:

<u>Կադրային քաղաքականություն</u>

Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում էր միտված լինել մասնագիտական և մոտիվացված թիմի զարգացմանը և ամրապնդմանը: Բարձր մակարդակի կոմպետենցիաների պահպանման, ինչպես նաև բանկային ոլորտում ժամանակակից միտումներին և փոփոխություններին հարմարվելու նպատակով իրականացվել են աշխատակիցների որակավորման բարձրացման ծրագրեր հիմնական ուղղություններով՝ ներառյալ ռիսկերի կառավարում, ներքին աուդիտ, թվային տեխնոլոգիաներ և արհեստական բանականություն, ինչը նպաստել է Բանկի ստորաբաժանումների գործունեության ընդհանուր արդյունավետության բարձրացմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Արագացող գլոբալ թվայնացման պայմաններում Բանկն ուժեղացրել է իր ուշադրությունը տեխնոլոգիական փոխակերպման և հաճախորդակենտրոն մոտեցման զարգացման վրա: Այս համատեքստում նշված ուղղությունները առանձնացվել են որպես ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներ՝ գործընթացների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, բանկային պրոդուկտների կենսացիկլի բոլոր փուլերում ժամանակակից թվային լուծումների ներդրումը ապահովելու, ինչպես նաև Բանկի ռազմավարական նախաձեռնություններն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով՝ ներառելով նաև տնտեսության տարբեր ոլորտներում հեռանկարային ուղղությունների արագ յուրացումը:

Բանկի կադրային քաղաքականության շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունավետության մասին վկայում է նաև անձնակազմի հոսունության մասով գրանցված պատմականորեն ամենացածր մակարդակը:
31.12.2025թ.-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 979:

<u>Համապատասխանություն օրենսդրական պահանջներին</u>

Օրենսդրական և կարգավորող պահանջների արագ փոփոխությունների պայմաններում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նոր պահանջների ներդրման և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությանը: Մշտական հիմունքներով իրականացվել է Բանկի գործունեության հսկողություն՝ նորմատիվ-իրավական պահանջներին համապատասխանության ապահովման նպատակով, այդ թվում՝ Ներքին աուդիտի և Համապատասխանության տնօրինության կողմից իրականացվող պլանային և թեմատիկ արտագնա ստուգումների միջոցով: Սպասարկող անձնակազմի իրազեկվածության մակարդակի բարձրացման և պահանջների պատշաճ պահպանման նպատակով տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են թեմատիկ սեմինարներ, վերապատրաստման և ուսուցողական ծրագրեր, որոնց արդյունավետությունը հաստատվում է հաճախորդների գոհունակության մակարդակի ցուցանիշների զգալի աճով:

<u>2026 թվականի ռազմավարական առաջնահերթությունները</u>

Այս տարի Բանկն իր բիզնես նպատակներին հասնելու համար սահմանել է հետևյալ ռազմավարական ուղենիշները.

- ✓ **Բանկի ներդրումային գրավչության բարձրացում՝** շահութաբերության աճի, ռեսուրսային բազայի մատչելիության վրա կենտրոնացման, ինստիտուցիոնալ ներդրողների շրջանակի ընդլայնման, ինչպես նաև եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացման, այդ թվում՝ կոմիսիոն մարժայի աճի միջոցով:

- ✓ **Բանկի տեխնոլոգիական հարթակի զարգացում՝** գործառնական գործընթացներում արհեստական բանականության գործիքների ակտիվ ինտեգրման, հաճախորդների բազայի խորքային վերլուծության համար ժամանակակից վերլուծական գործիքների ներդրման, ինչպես նաև թվային ծառայությունների և հաճախորդների հետ փոխգործակցության եղանակների ընդլայնման ու կատարելագործման միջոցով:

- ✓ **Հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ամրապնդում՝** պոտենցիալ լսարանի և հաճախորդների հեռանկարային սեգմենտների բացահայտման, բանկային պրոդուկտներն ու լրացուցիչ ծառայությունները համատեղող համալիր փաթեթային առաջարկների մշակման միջոցով, որոնք կնպաստեն հաճախորդների ֆինանսական կարիքների առավել լայն շրջանակի ընդգրկմանը և Բանկի էկոհամակարգում նրանց ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

- ✓ **Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրում՝** ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի կատարելագործման, կառավարման և հսկողական մարմինների միջև լիազորությունների ու պատասխանատվության բաշխման արդիականացման, կառավարման մարմինների արդյունավետության գնահատման, ինչպես նաև շուկայական միջավայրի փոփոխություններին և Բանկի ռազմավարական առաջնահերթություններին արագ հարմարվելու ունակ ճկուն կադրային կապիտալի զարգացման միջոցով:

Որդեգրված ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև նպատակ է դրել 2026 թվականին հասնել 13.1 մլրդ դրամ զուտ շահույթի:

Անկեղծորեն շնորհակալ եմ մեր բաժնետերերին և ներդրողներին՝ մեր թիմի նկատմամբ ցուցաբերած աջակցության և վստահության համար, ինչպես նաև մեր հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկն ընտրելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև Յունիբանկի ողջ թիմին՝ եռանդուն և պրոֆեսիոնալ աշխատանքի համար:

Համոզված եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ Յունիբանկը կշարունակի իր վստահ ճանապարհը դեպի նոր բարձունքներ և հաջողություններ:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ